11"05.2020թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 411833/09

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, ուսումնասիրելով 11"05.2020 թվականի թիվ 11633 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ —— վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

<<ԷԼԻՊՍ-ԴԵԼՏԱ>> ՍՊԸ-ի տնօրեն Արայիկ Սահակյանը (ՀՎՀՀ՝ 00835214, հասցե՝ ք.Երևան Շինարարների 8 11) ՀՀ Կառավարության 28.06.2018թ-ի 737-Ն որոշման 8-րդ կետով սահմանված ժամկետում չի ներկայացրել **2020 թվականի փետրվարին ՀՀ պետական սահմանով տեղափոխված ապրանքների վերաբերյալ վիճակագրական ձևերը:** Նկարագրված արարքի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169²-րդ հոդվածով:

Փոստային ծառայության միջոցով հետադարձ ծանուցմամբ Արայիկ Սահակյանին ծանուցագիր է ուղարկվել ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն ներկայանալու, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու վերաբերյալ:

Կողմին հայտնաբերելու ուղությամբ ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առարկություն կամ բացատրություն առկա չէ:

Գործի քննության ընթացքում պարզվել է, որ <<ԷԼԻՊՍ-ԴԵԼՏԱ>> ՍՊԸ-ի կողմից 2020 թվականի փետրվար ամսին կատարվել է 1 (մեկ) գործարք:

Այն փաստը, որ Արայիկ Սահակյանի կողմից վերջին մեկ տարվա ընթացքում նման իրավախախտում չի կատարվել, ուստի կատարված իրավախախտման համար պատասխանատվություն է նախատեսվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169²-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի իրավախախտման համար նախատեսվում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Հաշվի առնելով վերոնշված հանգամանքները վարչական մարմինը վարչական տույժ նշանակելիս ապահովում է համաչափություն կատարված արարքի և նշանակվող տուգանքի չափի միջև, ուստի հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինիս կողմից թույլ տրված իրավախախտումը ունի նվազ նշանակություն և թույլ է տրվել առաջին անգամ, և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169² հոդվածի 1-ին մասով, 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 234 հոդվածով, 282 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169² հոդվածի 1-ին մասով, Արայիկ Սահակյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նախազգուշացում:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝ Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն հանձնելու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում: